ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2023 թվական թիվ 69-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ 08-006-0120-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, 76-րդ հոդվածի 3-րդ մասի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության, 08-006-0120-0002 կադաստրային ծածկագրով 1,716145 հեկտար մակերեսով ջրամբարի պահպանության գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, վարձակալության իրավունքով, մրցութային կարգով տրամադրել օգտագործման:

2. Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել 200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Մրցույթի մեկ քայլը սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -2

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Կ. ԱՐՇԱԿՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Լ. ՂԱԶԱՐՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Հ. ՆԱՎՈՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

13 ապրիլի 2023 թվական
գյուղ Ախուրյան